երեք չորս օր առաջ, պեղուած հողակոյտի և ժայռերու բեկորներու վրայէն մեծ դժուարութեամբ անցանք,

Դռան շրջանակներն սրբատաշ քարով էին շինուած, ներսի երեսն աջ ու ձախ դռան երկու կշտերն պարսպի մէջ մարդ մի կանգնելու չափ տեղ կերևի, պահապանաց համար շինուած է, որ ոտից վերայ կանգնած հսկեն։

Դռնէն ներս մտած ենք, հինգ վեց սանդուխ ևս բարձրացանք, մեր առջևը պարզուած է դէպի արևելք երկարացած բերդս, մեր աջ կողմը կը տեսնենք տափարակ մի, որ բլուրիս գագաթն կոփելով՝ և խոնարհեցնելով հարթած են, այս հարթուած տեղւոյն միջավայրն ևս նման ներքին մթերանոցներուն ջրամբար կոփած է, նաև ամբողջ հարաւային երեսն ժայռից պարիսպ թողուած գագաթն հարթելու միջոցին, այս երեսն անհպելի է. Շեռեան $1^1/_2$-2 քոլոմեթրի չափ խորխորատ մի կազմած է։

Այս բնական պարիսպն ունի քանի պատուհաններ նետ արձակելու համար, պատուհանի ներսի երեսին մօտ երկու կողմն աղեղան երկու ծայրերն հաստատելու և դրսի երեսի միջավայրը նետի ծայրն ուղիղ կանգնելու համար քարի մէջ կոփուած է, որպէս զի Շեռեանայ յայնկոյս եղող Կուռիս սարի կողմն նետ արձակեն։

Փոքրիկ աշտարակ մի շինուած է բերդիս արևելեան ծայրն, մի փոքր լուսամուտ ևս բացուած է ուղղակի արևելք, ուստի կը տեսնուի մէկ գծի վերայ արքունական ճանապարհն և նորա շուրջն գտնուած ամբողջ գիւղերն, սարերն և լեռներն մինչև Դիատին։

Հարթուած տափարակի մէջ գտնուած ջրամբարին համար ևս կասուի թէ անյատակ էր և թէ չուան